



Նախագահի գրասենյակ

2020 թվականի մայիսի 11

Բարի լույս LACC ընտանիք,

Հուսով եմ, որ դուք բոլորդ վայելեցիք Մայրերի օրվա կապակցությամբ տոնական հանգստյան օրերը: Ավելի շատ բիզնեսներ, գովի դաշտեր, արշավային արահետներ են բացվել, և դուրս գալու հիանալի օրեր էին այս հանգստյան օրերը: Հուսով եմ՝ առիթ ունեցաք մի փոքր հանգստանալու և վայելելու:

Այս շաբաթ լրանում է հեռավոր/առցանց միջավայրում գտնվելու 9-րդ շաբաթի սկիզբը, որում մենք հայտնվել ենք այս վերջին մի քանի ամիսների ընթացքում: Թեև մենք չէինք էլ պատկերացնում, որ սա այսքան երկար կտևի, երբ հեռանում էինք քոլեջից, առջևում, ամենայն հավանականությամբ, սպասվում են մի քանի շաբաթ կամ գուցե ևս մի քանի ամիսներ: COVID-19-ի դրական դեպքերի թիվը և մահվան դեպքերը շարունակում են աճել ևս Անջելես համայնքում, թերևս այն կտրուկ չի աճել: Ըստ երևույթին, մարտի կեսերին ձեռնարկված միջոցները նպաստել են դանդաղեցնել վիրուսի տարածումը, բայց պարզ կլինի, երբ ավելի շատ -ամանակ անցնի: Քանի դեռ մենք սպասում ենք լրացուցիչ հրահանգների մեր տեղական առողջապահության վարչությունից, ինդրում ենք շարունակել ձեր այն գործելակերպը, որ գործածել եք մարտի սկզբներից: Ձեր ձեռքերը հաճախ լվացեք օճառով և ավելի երկար՝ առնվազն 20 վայրկյան, ձեր տնից դուրս նոր իրեր բռնելիս օգտագործեք ձեռքի ախտահանիչ, բացի ընտանիքի անդամներից սահմանափակել շփումը այլ մարդկանց հետ, երբ հասարակության մեջ եք, դեմքի ծածկույթ կրեք՝ քթի և բերանի վրա, և փորձեք անվտանգ հեռավորություն պահպանել ձեր շրջապատից առնվազն վեց ինչ: Եթե հիվանդ եք, մնացեք տանը:

Չորեքշաբթի օրը հատուկ թաուն Յոյի հանդիպում է: Կոնգրեսական Ադամ Շիֆը, որը միանալու մեր հանդիպմանը, կվարի թաուն Յոյը: Այն բնույթով իմ թաուն Յոյերի նման է: Այն տեղի կունենա Չոլմոյ: մենք կարողացել ենք ընդլայնել Չոլմի սենյակը՝ տեղավորելու բոլոր նրանց, ովքեր ցանկանում են մասնակցել: Ահա Չոլմ հանդիպման ID-ն՝ հանդիպման ID: 998 7446 2626:

Այս տարի Սևական ավարտական արարողությունը տեղի կունենա երեքշաբթի՝ մայիսի 19-ին, ժամը 15:00-ին: Դա վիրտուալ արարողություն կլինի: Արարողության հղումը կուղարկվի ձեզ այս

շաբաթվա վերջին: Լավանդերա ավարտական արարողությունը տեղի կունենա երեքշաբթի՝ հունիսի 2-ին, ժամը 16:00-ին: Դա ևս կլինի վիրտուալ: Ես ձեզ կուղարկեմ այդ տեղեկությունները, հենց որ մենք ստանանք այս երկու արարողությունների վերաբերյալ: Մենք վիրտուալ ճանաչման արարողություն կունենանք երեքշաբթի՝ հունիսի 9-ին, ժամը 17:00-ին՝ ճանաչելու 2020 թվականի մեր դասարանների հաջողությունները: Թեման հետևյալն է. Առաձգական ժամանակներ՝ փայլուն մտքերի համար: Հիշեք, որ մենք կունենանք ավարտական անհատական արարողություն մեր 2020-ի դասի համար, երբ մենք կրկին կարողանանք հավաքվել դեմ առ դեմ: Հուսով եմ, որ դա կլինի ոչ ուշ, քան 2021 թվականի հունիսին:

Առջևում շարունակում ենք շատ աշխատանք կատարել, քանի դեռ մենք պլանավորում ենք COVID-19 համաճարակի վերականգնումը: Անցյալ շաբաթ Լոս Անջելես համայնքի հանրային առողջության վարչությունը (LACDPH) հրապարակեց վերականգնման նոր ճանապարհային քարտեզ: Այն կցված է այս էլ. հաղորդագրությանը: Այն ուրվագծում է վերականգնման հինգ փուլերը: Սկզբում կային միայն չորս փուլեր: Լոս Անջելեսի Համայնքային քոլեջի շրջանի (LACCD) վերականգնման ծրագիրը արդեն գործում է և այժմ հինգ փուլերը ներառված են: LACC Incident Command Center- ը (ICC) ընդգրկում է այս բոլոր քայլերը իր վերականգնման ծրագրում: Մենք սպասում ենք դիստրիկտի ղեկավարության հետագա հրահանգներին, որպեսզի կարողանանք ավարտին հասցնել 2-րդ փուլի պլանը և պատրաստվենք 3-րդ փուլին, ապա 4-րդ փուլին: Մենք ներկայումս գտնվում ենք 1-ին փուլում: Բոլոր փուլերում՝ 1-ից 4-ը, կլինեն պաշտպանիչ միջոցներ, որոնք կկիրառվեն մեր ուսանողների, մեր դասախոսական անձնակազմի և մեր աշխատակազմի առողջության և անվտանգության համար: 5-րդ փուլը լիովին վերականգնված գործողություններ են, և դա տեղի կունենա այն դեպքում, երբ լինի պատվաստանյութ կամ հոսսայի բուժում COVID-19-ի դեմ:

Եթե դա բավարար սթափեցնող նորություն չէ, ապա մենք անցյալ շաբաթ լուր ստացանք, որ Նահանգապետ Նյուսոմը այս շաբաթ կունենա մայիսյան վերանայում, որտեղ նա կբացահայտի մեր պետության բյուջեի այս և հաջորդ տարում սպասվող պակասորդները: Բոլոր ցուցումներն այն են, որ հաջորդ տարի շուրջ 54 միլիարդ դոլարի պակասորդ է լինելու: Սա բարդացնում է իրավիճակը, բայց ես համոզված եմ, որ մենք միասին այն կհաղթահարենք: Ես չեմ վախենում, քանի որ, դիստրիկտում իմ գործունեության ընթացքում, բյուջեի երկու հիմնական կրճատումների միջոցով անցել եմ: Դա հեշտ չի լինի, բայց մենք միասին կկայացնենք դժվար որոշումները:

Թույլ տվեք հիմա թեթևացնել իրավիճակը: Մենք գրանցվում ենք ամառային դասերի համար, և պահանջարկը մեծ է, ինչպես և ակնկալում էինք: Այս ամառ առաջարկվող բոլոր դասերը կլինեն հեռավոր/առցանց: Ուսանողներ, խնդրում եմ գրանցվել ձեր գրանցման ժամին և օրը, որպեսզի

ապահովեք ձեր տեղը դասարանում: Մենք հետևում ենք գրանցումներին և սպասողների ցուցակներին:

Ե՛վս մեկ հիանալի նորություն՝ մենք աշխատում ենք այն ուղղությամբ, որ քրոմբուբերն ուղարկենք այն բոլորին, ովքեր մեր ցուցակի վրա են: Եթե դուք ցուցակի վրա եք, մեր անձնակազմը կկապվի ձեզ հետ Էլ. Փոստի, հեռախոսազանգի և տեքստային հաղորդագրության միջոցով՝ ձեր փոստային հասցեն հաստատելու համար: Խնդրում ենք պատասխանել հնարավորինս շուտ, որպեսզի այս շաբաթ կարողանանք ձեզ ուղարկել ձեր քրոմբուբը:

Աշնան գրաֆիկը այժմ մշակվում է: Աշուն 2020-ի դասերի դասացուցակը տեղադրվելու է մինչև ուրբաթ՝ մայիսի 29-ը: Աշնանային գրանցումը կսկսվի երկուշաբթի, հունիսի 8-ին: Ուսանողներ, ինդրում ենք գրանցվել ձեր Աշնանային դասերի համար, հենց որ ձեր ժամադրության օրը գա: Ես ակնկալում եմ, որ աշնանային պահանջարկը կրկին բարձր կլինի, քանի որ այն ուսանողները, ովքեր համալսարան պետք է տեղափոխվեին այս աշնանը, կշարունակեն դասերը քոլեջում: Մենք պլանավորում ենք հեռավոր/առցանց ժամանակացույց Աշնան համար՝ քիչ թվով դասերի համար, որոնք դժվար են վերածել հեռավոր/առցանց դասերի, այն դեպքում, երբ աշնանը ինչ-որ ժամանակ մենք հնարավորություն ունենանք առաջարկել դրանք: Մենք հիմա գաղափար չունենք, թե արդյոք դա հնարավոր կլինի:

Մեր կապի և հավաքագրման անձնակազմը քրտնաջան աշխատում է այն ավագ դպրոցի աշակերտների հետ, որոնց հետ նրանք աշխատում էին մեր աշնանային գրանցման համար: Մենք այժմ աշխատում ենք նաև ստեղծել Թաուն Յոլ մեր LAUSD-ի տնօրենների համար, որպեսզի մենք կարողանանք նրանց տեղեկացնել այն մասին, թե ինչ է կատարվում LACC- ում և ինչ կարող ենք միասին անել, որպեսզի օգնենք մեր տեղական ավագ դպրոցի շրջանավարտներին շարունակել իրենց ուսումը LACC-ում մեր կամուրջ ծրագրի միջոցով այս ամառվա և աշնան ընթացքում:

Մենք դեռ շատ հիանալի բաներ ունենք, որոնք կատարվում են LACC- ի հետ: Ես շարունակում եմ հետևել աչալրջորեն: Սրանից դուրս ենք գալու: Սա ժամանակավոր է: Մենք սրանից դուրս ենք գալու ավելի ուժեղ, քան երբևէ:

ՀԱՎԱՏԱ ՆՎԱՃԻՐ ՀԱԶՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՍԻՐ
որպեսզի կանգնեցնի մեզ, մենք համառ ենք:

Անկախ նրանից, թե ինչ է դրվում մեր առջև,

Լավ և ապահով եղեք:

Մերի

Խնդրում ենք այցելել [LACC](#) կայք՝ այս հաղորդագրությունը հայերեն, կորեերեն, ռուսերեն կամ իսպաներեն լեզուներով կարդալու համար

Please visit the [LACC website](#) to view this message in Armenian, Korean, Russian, or Spanish.

Посетите LACC [website](#) , чтобы посмотреть это сообщение на Армянском, Корейском, Русском или Испанском языках.

Para ver este mensaje en español, favor de visitar el sitio web de [LACC](#)